


103/2

Ա. ՏԵՍԵՐԻՆ

ԼԵՆԻՆՅԱՆ-ՌԱՎԻՆՅԱՆ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳՈԽՄԱՐՆԵՐԸ



ՅԵՐԵՎԱՆ—1938

24 SEP 2006

3KCM2

S-36

Ա. ՏԵՍՔԻՒԹԻՒՆ

Այ

ԼԵՆԻՆՑԱՆ - ԱՏԱԼԻՆՑԱՆ
ԿՈՄՑԵՐԻ ՏՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

3472


ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՐԵՎԱՆ

1938

13.08.2013

103/2

ՀԱՅՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ



6192
38



«կոմունիստական Յերիտասարդական Միաւթյանը պետք է լինի հարվածային մի խմբակ, զարն առնեն մի աշխատանքում ցուցյա և տալիս իր ոգնությունը, հանգեստ և բերում իր ձեռնուրեցությունը և նախաճանանությունը: Միությունը պիտի լինի այնպիսին, վորապես յուրաքանչյուր բանվոր նրան մէջ տեսնիք այնպիսի մարդկանց, վորոնց ուսմունքը զայցի և նրան անհասկանալի յե, վորոնց ուսմունքին զուցյա և նա միանդամից չի հավատա, բայց վորոնց կենդանի աշխատանքով, նրանց զորացունելյամբ նա կտեսնիք, զարդարանք իրաւուցես այն մարդկին են, վորոնք նրան ձշմարիտ ճանապարհ են ցուցյա տալիս»:

J. B. LEE,





«Հարկավոր ե, վորպիսղի յուրաքանչյուր
կոմյիշբիտական-ակտիվիստ շինարարության
բոլոր բնագավառներում կատարած իր ամեն-
նորյա աշխատանքը կապակցի սոցիալիտատական
հասարակության կառուցման հեռանկարի հետ:
Հարկավոր ե, վորպիսղի նաև կարդանա իր
ամենորյա աշխատանքը տանել այդ հեռանկա-
րի կենսագործման փողով և ուղղությամբ»:

Ե. Վ. ՍՏՈԼԻՆ





1928 թվի մայիսի 5-ին, Մասկովի մեծ թատրոնում, համեմատվոր կերպով բացվեց Համելիչեմ 8-րդ համազումարք Համազումարի յերկու հազար պատվիրակները գոաքի կանգնած լսեցին Կենտրոնական Գործադիր Կոմիտեի պատվորի ընթերցումը:

«Հավերժացնելու համար Համամիութենական Կոմունիստական Յերիտասարդական Միության մարտական ծառայությունները քաղաքացիական կոիվների ճակատներում, 1919—1920 թվերի շրջանում, ընդում Կոլչակի, Դենիկինի, Յուդուչչի, սպիտակ լենիրի և Վրանգելի, յեր Համելիչեմ անդամների համամիութենական մոքիլիզացիաները կարմիր Բանակի շարքերը լցրին տասնյակ հազար հե-

Կավիսիական յերիտասարդներ, վորոնք պըուկատարիա-
տի զործին իրենց նվիրվածությունն առացուցեցին
հերոսական սիրագործություններով և ապին իրենց
կյանքը հանուն սոցիալիզմի հոգիանակի, Խորհրդ-
բային Սոցիալիստական Հանրապետությունների
Միության Կենտրոնական գործադիր Կոմիտեն պար-
գևատրում և նրան «Կարմիր Դրոշ» շքանշանով՝ հա-
մաշխարհային Սոցիալիստական Հեղափոխություն
Խորհրդանշանով»:

1931 թվի հունվարին կոմյերիտմիությունը
պարզեաւրվեց 2-րդ շքանշանով՝ աշխատանքային
Կարմիր գրոշի շքանշանով։ ԽՍՀՄ Կենտրոնական
համագույն գործադան մէջ զրված եր։

«Հարվածայնության և սոցիալիստական մրցու-
թյան զործում հանդես բերած նախաձեռնություն
համար, վորն ապահովեց ԽՍՀ Միության ժողովր-
դական տնտեսության զարգացման հնգամյա պահնի
հաջող կատարումը, ԽՍՀ Միության Կենտրոնական
համագույն գործադան և Համամիութենական
Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միու-
թյանը պարզեաւրել «Աշխատանքային Կարմիր
Դրոշ» շքանշանով»։



ԵՐԵՎԱՆ-ՍՏԱԼԻՆՑԱՆ ԿՈՄՅԵՐԻՑՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ

(Պատմական տեղեկություններ)

ԴԿՑԵՄ 1-ԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կոմյերիտմիության 1-ին համառուսական
համագումարը, վորք ձևակերպեց յերիտա-
սարդության կոմունիստական միության
ստեղծումը, կայացավ Մոսկվայում, 1918
թվի հոկտեմբերի 29-Նոյեմբերի 4-ին։ Այդ
համագումարի հրավիրումով բոլորվեց այն
հակայական աշխատանքը, վոր վարեց բոլ-
շևվիկյան կուսակցությունը՝ մեր յերկրի
աշխատավոր յերիտասարդությանը միավո-
րելու և համախմբելու ուղղությամբ։

Աշխատավոր յերիտասարդության առա-
ջին կազմակերպություններն սկսեցին ծա-

գել Խուսաստանում դեռևս մինչև Հռկտեմբ
րերյան Սոցիալիստական Մշհ Հեղափոխու-
թյունը:

1917 թվի փետրվարին միապետության
տապալումն ուժեղ զարկ տվեց պրոլետարա-
կան յերիտասարդական շարժմանը: Մոսկ-
վայի և Պետրոգրադի բանվորական յերի-
տասարդությունն այդ շարժման առաջին
շարքերումն եր: Աշխատավոր յերիտասար-
դության քաղաքական ակտիվության հսկա-
յական աճը նապատեց նրան, վոր արդեն
1917 թվի մարտապրիլին ամենուրեք
սկսեցին յերիտասարդական կազմակերպու-
թյուններ ստեղծվել: Նրանց առաջացման
ու արագ աճման պայմանները նախապատ-
րաստված եյին մասսաների մեջ բոլշևիկ-
ների տարած վողջ աշխատանքով:

Յերիտասարդական միությունները մեծ
մասամբ ստեղծվում եյին կուսակցական
կոմիտեների նախաձեռնությամբ: Իրենց
դոյլության առաջին խոլորից, նրանք
սերտորեն կապված եյին բոլշևիկյան կու-

սակցության հետ և աշխատում եյին նրա
զեկավարության տակ:

Բոլշևիկյան կուսակցությունը և նրա
առաջնորդներ լեռինը ու Ստալինը միշտ ել
մեծ նշանակություն եյին տակի յերիտաս-
արդության մասնակցությանը պրոլետա-
րիատի հեղափոխական պայքարին, ապա-
հովում եյին յերիտասարդության քաղաքա-
կան ու տնտեսական իրավունքների պաշտ-
պանությունը և յերիտասարդությանը ներ-
դրավում եյին հեղափոխական ակտիվ գոր-
ծունեյության մեջ:

Յերիտասարդությանը կուսակցության
շուրջը համախմբելու գործում մեծ գեր խա-
ղացին բոլշևիկյան «Զվեզդա» և «Պրավդա»
լուրերը, վարոնք ունեյին թղթակիցների
նշանակալից ցանց բանվոր յերիտասարդու-
թյունից: «Պրավդա»-ն 1917 թ. ապրիլ-հու-
նիս ամիսներին հրապարակեց Ն. Կ. Կրուպ-
սկայայի մի շարք հոգվածները՝ բանվորական
յերիտասարդության միությունների կազ-
մակերպման հարցի շուրջը: Բոլշևիկյան

բանվորական յերիտասարդության ակտիվ
մասնակցությամբ ջախջախեցին ըուրժուա-
ղիայի ու նրա գործակալների -մենշևիկ-
ների ու հսկուների -փորձերը՝ տիրապետե-
լու յերիտասարդական շարժմանը: Պետքու-
գրագում ծագած «Աշխատանք և լույս» ա-
նունը կրող բուրժուական-կուլտուրական
յերիտասարդական կազմակերպությունը շատ
շուտով բոլշևիկյան ազգեցության մեջ ընդ-
դրկվեց: Յերիտասարդության միություն-
ները կազմակերպվում և աճում եյին բոլ-
շևիկյան կուսակցության գեկավարու-
թյամբ: Կուսակցության 6-րդ համագումարի
որերին յերիտասարդության Մոսկվայի
ու Պետրոգրադի միությունները մի քանի
հազար մարդ ունեցին: Կուսակցության 6-րդ
համագումարը՝ Հոկտեմբերյան Սոցիալիս-
տական Մեծ Հեղափոխության մարտական
նախապատրաստման այդ համագումարը,
վորը տեղի ունեցավ 1917 թվի սկզբունքն,
ընկեր Ատալինի գեկավարությամբ, հատուկ
քննության առավ յերիտասարդության

կազմակերպությունների հարցը: Բոլեվիկ-
յան կուսակցությունը յերիտասարդությա-
նը դիտում էր, վորպես սոցիալիստական հե-
ղափոխության հիմնական ուղերժներից մե-
կը: Կուսակցության 6-րդ համագումարը յե-
րիտասարդական շարժման գրագայնան հա-
մար՝ հսկայական նշանակություն ունեցավ.
Նա բնորոշեց, թե ինչպիսին պիտի լինեն
հեղափոխական յերիտասարդության միու-
թյունները, և դրեց այն հիմքը, վորի վրա
առաջացավ ու աճեց կոմսոմոլը:

«Ներկայումս, —ասված է համագումարի
«Յերիտասարդության միությունների մա-
սին» բանահետոմ, —յերբ բանվոր դասակար-
գի պայքարն անցնում է համուն սոցիալիզ-
մի մղվելիք անմիջական պայքարի ֆազային,
համագումարը բանվորական յերիտասար-
դության դասակարգային սոցիալիստական
կազմակերպությունների ստեղծմանն աջակ-
ցելը համարում է մոմենտի անհետաձգելի
ինդիքներից մեկը և պարտավորեցնում է
կուսակցական կազմակերպություններին

այս աշխատանքին համեստակացնել հնարավուրին չափ մաքսիմում ուշադրություն»¹:

Կուսակցության Ե-րդ համագումարի վորոշումներն ոժանդակեցին յերիտասարդական կազմակերպություններին՝ արագ կերպով աճելու և զարգանալու:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը մեր յերկրում բռնոր հնարավորություններն ստեղծեց յերիտասարդության կոմունիստական շարժման լայն զարգացման համար: Սոցիալիստական հեղափոխությունը յերիտասարդ աշխատավորների ամենալայն մասսաներին բարձրացրեց ակտիվ քաղաքական կյանքի, նպաստեց նրանց գիտակցության ու կաղմակերպագածության արագ աճին: 1918 թվակի աշնան սկզբին բանվորական յերիտասարդության միություններ արգեն գոյություն ունեցին Պետրոգրադում, Մոսկվա-

յում, Սվերդլովսկում, Խարկովում, Իվանովում, Տուլայում և մի շաբթ այլ քաղաքներում: Յերիտասարդության սոցիալիստական շարժումը մուտք գործեց և գյուղ:

Արագ զարգացող յերիտասարդական շարժման լուրջ թերությունն այն եր, վորբացայում էր Համառուսական միավորում, վորի անհրաժեշտությունը քանի գնում այնքան սուր կերպով եր զգացվում: Համառուսական համագումարի նախապատրաստման նախաձեռնությունն իրենց վրա վերցրին Մոսկվայի և Պետրոգրադի բանվորական յերիտասարդության սոցիալիստական միությունները:

1918 թվի հոկտեմբերի 29-ին համագումարն սկսեց իր աշխատանքը: Համագումարին ներկայ եյլին 176 պատգամավորներ, վորոնք ներկայացնում եյլին 22.100 կաղմակերպված յերիտասարդություն: Համագումարը քննության առաջ հետեւյալ հարցերը՝ գեկուցումներ տեղերից, ընթացիկ մումայի մասին, Արևմուտքում բանվորական

¹ «Համեմության կոմիտեի աշխատանքների մասին», Եջ 9. Կուսակցության 1933 թ.

յերիտասարդության շարժման մասին, միուլթյան ծրագրի և կանոնադրության մասին, կուլտ-լուսավորական աշխատանքի մասին, կազմակերպչական և ֆինանսական հարցերը:

Առաջին համագումարի նշանակությունն այն է, վոր նա շարժումը ձեսկերպից քաղաքականորեն և կազմակերպչորեն, միավորելով մեր յերկրի յերիտասարդական կազմակերպությունները յերիտասարդության միասնական կոմունիստական միության մեջ:

Համագումարում վեճ եր գնում միուլթյան անվան մասին: Մի քանի պատգամավորներ յելույթ ելին ունենում այն բանի գեմ, վորպեսզի միությունն իրեն անվանի յերիտասարդության կոմունիստական միություն, իրենց տեսակետը հիմնավորելով նրանով, վոր այդ անունը, իբր թե, կարող է միությունից հետ մղել գյուղացիական յերիտասարդությանը: Այս վոչ ձիշտ տեսակետը դատապարտվեց համագումարի կողմից: Համագումարը մերժեց նաև Ուրալի պատգամավորության առաջարկը

բանվորական յերիտասարդության ինքնուլթյուն՝ «Յերիտասարդ պրոլետարների տներ» ձեռվ կազմակերպություն ստեղծելու մասին:

Համագումարի առանձին պատգամովորների այս աղանդավորական տրամադրությունները «ձախ կոմունիստների» դավաճանական հակալենինյան գծի արտահայտությունն եր յերիտասարդական շարժման մեջ: Իր վորոշումների մեջ համագումարն ընդգծեց ՈԿՅԵՄ-ի, վորպես յերկրում բանվորական և գյուղացիական յերիտասարդության միակ մասսայական կազմակերպության, նշանակությունը: Այդ վորոշումները հակայական նշանակություն ունեցան միության հետագա զարգացման համար, վորովհետեւ նրանք ճշտորեն բնորոշեցին յերիտասարդական կազմակերպությունների նպատակն ու բնույթը:

Համագումարը միությունն անվանակոչեց Ռուսաստանի կոմունիստական յերիտասարդական միություն, ընտրեց կենարունա-

կան կոմիտե և վորոշեց իրեն հաշվել ՌԿՅԵՄ
Հ-ին համագումար:

Համագումարը ՌԿՅԵՄ ծրագրի հիմնա-
կան թեկիսներում կազմակերպության գըլ-
խավոր խնդիրը բնորոշեց հետեւյալ կերպ.
«Միությունը համեստաշխ և Ռուսաստանի
կոմունիստական (բոլշևիկների) կուսակ-
ցաւթյան հետ Միությունն իրեն նպատակ
և գնում՝ տարածել կոմունիզմի իդեալները
և բանվորական ու գյուղացիական յերիտա-
սարգությանը ներգրավել Խորհրդային Ռու-
սաստանի ակտիվ շինարարության մեջ»¹:

Համագումարը հավաքվեց յերիտասարդ
Խորհրդային հանրապետության համար գրժ-
վարին շըջանում: Արդյունաբերության մեջ
և տրանսպորտաւմ քայլայումն եր թագա-
վորում: Քաղաքում վառելանյութի և կեն-
սամթերքների պակաս կար, ամենուրեք
կուլակների, եսերների, մենցեկների, սպի-

տակ գվարդիականների հականեղափոխա-
կան խոռոչություններ եյին բանկվում: 1918-
թվի վերջին հիմնականում արդեն ձևավոր-
վել եյին քաղաքացիական պատերազմի հա-
կանները և սկսում ե անտանտի պետու-
թյունների առաջին արշավը Խորհրդային
Ռուսաստանի դեմ:

Հնթացողիկ մոմենտի մասին դեկուցման
առթիվ ընդունված բանաձեռում համագու-
մարը հայտարարեց Ռուսաստանի հեղափո-
խական յերիտասարգության պատրաստա-
կամության մասին՝ բոլոր ուժերով պաշտ-
պանելու Հոկտեմբերյան Սոցիալիստական
Մեծ Հեղափոխության նվաճումները:

Զեկուցումները տեղերից ավելի յերիտա-
սարգության միությունների կյանքի և աշ-
խատանքի վառ պատկերը: Միություններն
ակտիվորեն մասնակցում եյին հականեղա-
փոխական խոռոչությունները ճնշելուն, կար-
միր Բանտկի ջոկատներն ամբաղնդելուն,
ճակատ ուղարկելու համար զորահավաքին,
քաղաքների համար վառելիք և պարենա-

¹ «ՌԿՅԵՄ առաջին համագումարի արձանագրու-
թյունները», էջ 76, կուսհամ 1934 թ.:

մթերք հայթայթելուն։ Սրա հետ միասին
մշակվում էյին միության տնտեսական ծը-
րագրի հիմնական դրույթները, ծավալվուս
եր մասսայական քաղաքական և կուլտուր-
լուսավորական աշխատանքը յերիտասար-
դության շարքերում։

ՈկՅԵՄ 1-ին համագումարն անցավ բոլ-
շևիկյան կուսակցության անմիջական դե-
կավարությամբ։ Միությանը հսկայական
ոգնություն ցույց տվեց այդ որերին Վ. Ի.
Լենինը։

Համագումարի նախագահությունը զրույց
ունեցավ Լենինի հետ, միության աշխա-
տանքի խնդիրների մասին։ Վ. Ի. Լենինի
գործյամբ, ուղղված ընկ. Սվերդլովին,
ՈԿՅԵՄ Կ. Կ. միջոցներ սուացավ, վորոնք
անհրաժեշտ էյին կազմակերպության աշ-
խատանքի համար։

ՈԿՅԵՄ 1-ին համագումարից անմիջա-
պես հետո, կոմունիստական կուսակցու-
թյան կենտրոնական կոմիտեն կուսակցա-
կան բոլոր կազմակերպություններին մի

նամակ ուղարկեց, վորի մէջ մատնանշում
եր, վոր միությունը միավորում և յերի-
տասարգության լայն մասսաները և յերի-
տասարգությունից պատրաստում և կոմու-
նիզմի համար պայքարող մարտիկների գի-
տակից բանակ։ Նամակը պարտավորեցնում
եր կուսակցական կազմակերպություններին՝
չխախտելով յերիտասարգության ինքնա-
գործունելյությունը, բոլոր ջանքերը գործ
դնել, վորպեսզի ՈԿՅԵՄ կարողանա զար-
գացնել լայն և հաջողակի գործունելյու-
թյուն։

Բոլեվիկյան կուսակցությունը, նրա ա-
ռաջնորդներ Լենինն ու Սվերդլով ստեղծեցին
ու խնամեցին լենինյան կոմյերիտմիությու-
նը և բոլոր ետապներում հանդես եյին բե-
րում մեծագույն հոգատարություն նրա նը-
կատմամբ։ Կուսակցական բոլեվիկյան զե-
կավարությունը կոմյերիտմիության ուժի
ու ամրության աղբյուր հանդիսացավ։ Այդ
զեկավարության շնորհիվ կոմյերիտմիու-
թյունն աճեց, ամրապնդվեց և գարձավ յե-

ըիստասարդ լենինյանների հպոր մի կազմակերպություն:

Լենինի ու Ստալինի կուսակցության գեղավարության շնորհիվ, կոմյերէտմիությունը կարողացավ մոբիլիզացիայի յենթարկել աշխատավոր յերիտասարդության ամենալայն մասսաներին՝ պայքարելու հանուն սոցիալիզմի, ընդդեմ աշխատավոր ժողովրդի բոլոր թշնամիների:



ՈԿՅԵՄ ՀԱՄԱԴՐՈՒՄԱՐԾ

ՈԿՅԵՄ ՀԱՄԱԳՈՒմարը հավաքվեց 1919 թվի հոկտեմբերի 5—8-ին, խորհրդային յերկրի համար ամենակրիտիկական մոմենտին: Խորհրդային հանրապետությունն ամեն կողմից պաշարված եր թշնամիներով: 1919 թ. ամռան կեսին Անտանտան սկսեց իր յերկրորդ արշավանքը խորհրդների յերկը վրա: Հոկտեմբերի 13-ին Դենեկինի բանակը զավթեց Արյուր և արդեն սպառ-



1918 թիվ Յերիտասարդ կամավոր կարմիր բանակայինները Փրոնտ են ժամանել:

(Գեներալական Կին-Փուտ արխիվ:
Արտգ. Բ. Տայի վեաւագրություն)

Նում եր Տուլային ու Մոսկվային: Արևելքում
 կոչուկն եր փորձում հարձակման անցնել:
 Պետրոգրադին մոտենում եյին Յուլինիչի
 բանդաները: Այս սպառնալից մոմենտին
 կուսակցությունը մորիլիկացիայի յենթար-
 կեց իր բոլոր ուժերը՝ ինտերվենտների և
 ներքին հականեղափոխության գեմ հակա-
 հարված կազմակերպելու համար: 1919 թը-
 վի մարտին տեղի ունեցած ՌԿ(Բ)Կ 8-րդ
 համագումարը կուսակցության ուշագրու-
 թյունը կենտրոնացրեց յերկրի պաշտպա-
 նության և աշխատավոր գյուղացիության
 հետ գաշինքն ամրապնդելու հարցերի վրա:
 Կուսակցությունը վոտքի հանեց միլիոնա-
 վոր բանվորներին ու գյուղացիներին Հոկ-
 տեմբերյան Սոցիալիստական Միծ հեղա-
 փոխության նվաճումները պաշտպանելու
 համար: Կոմյերիտմիության ամբողջ աշխա-
 տանքն այդ շրջանում վորոշվում եր սով-
 մական իրազրությամբ, սոցիալիստական
 հայրենիքի պաշտպանության խնդիրներով:
 Կոմյերիտմիությունը՝ կուսակցության հա-

վատարիմ ոգնականը՝ իր բոլոր ջանքերը
կհնարոնացրեց այն բանի վրա, վորպեսզի
ոգնություն ցույց տա Կարմիր Բանակին՝
ինտերվենաների ու սպիտակ-դվարդիական-
ների դեմ մզած նրա պայքարում։ Այս նը-
սպատակով նա անցկացրեց կոմյերիտական
մի շարք մոբիլիզացիաներ՝ քաղաքացիա-
կան պատերազմի ճակատն ուղարկելու հա-
մար։ 1919 թվի մայիսին անցկացվեց կոմ-
յերիտականների տուաշխն համառուսական
մոբիլիզացիան գեպի աընելյան ճակատը,
Կոլչակի դեմ։ այդ մոբիլիզացիան ճակա-
տին տվեց Յ հազար մարդ։ Կոմյերիտական-
ները ճակատ ելին գնում ամբողջ կազմա-
կերպություններով։ Կոմյերիտամիությունն
ակտիվ կերպով մասնակցում եր նաև Կարմիր
Բանակի թիկունքն ամրապնդելու աշխա-
տանքներին, մասնաւորապես աշխատանքա-
յին կոմունիստական շաբաթորյակներ անց-
կացնելու մեջ (առաջին պատմական շաբա-
թորյակը Մոսկվա-Կազան յերկաթուղու վրա
տեղի ունեցավ 1919 թվի մայիսի 10-ին)։

Կոմյերիտականները յեսանդով աշխատում
ելին պարեն-ջոկսաներում, ոգնում ելին
Կարմիր Բանակի և արդյունաբերական քա-
ղաքների համար պարեն մթերելուն։

Յերկրի պաշտպանության խնդիրներով
եր բնորոշվում և ՈԿՅԵՄ 2-րդ համագումարի
վողջ աշխատանքը։ Համագումարը բացվեց
1919 թվի հոկտեմբերի 5-ին Մոսկվայում։
Համագումարին ներկա ելին 429 պատգա-
մավորներ, վորոնք ներկայացնում ելին
96,096 կազմակերպված յերիտասարդու-
թյուն։

ՈԿՅԵՄ 2-րդ համագումարի հիմքում
գրվեցին կուսակցության 8-րդ համագումա-
րի վորոշումները յերիտասարդության մեջ
տարվելիք աշխատանքի մասին։ Համագու-
մարը մատնանշեց, վոր կուսակցական աշ-
խատանքը բանվորական և գյուղացիական
յերիտասարդության մեջ հսկայական նշա-
նակություն և ստանում ոեղերմիներ նա-
խապատրաստելու համար, վորոնցից կու-
սակցությունը «կկարողանա վեցնել նոր,

հեղափոխական հնատուզիազմով սովորված, աղջիկ և գիտակից աշխատողներ», և վոր այդպիսի մի կազմակերպություն, վորը կոչված և գտառիարակել յերիտասարդությանը կունիսիմի վոգով, «Հանգիսանում և Ռուսաստանի կոմունիստական յերիտասարդական միությունը, վորը հսկայական աշխատանք և կատարում յերիտասարդության կազմակերպման և կոմունիստական գառտիարակության ուղղությամբ՝ կոչ անելով պլոտեարական յերիտասարդությանը՝ անմիջականորեն մասնակցի կոմունիստական հաստակության կառուցմանը և Խորհրդային հանրապետության պաշտպանությանը»¹:

1919 թվի ապրիլին Ռե(թ)ի կենտրոնական կոմիտեն վորոշում ընդունեց Ռուսաստանի կոմունիստական յերիտասարդական միության և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության փոխհարաբերության մա-

¹ «ՀամԿ (թ) կ կոմյերիտմիության մասին»: Եջ 10, 11:

սին: Մեր կուսակցության 8-րդ համագումարի ու կենտրոնի վարոշումները պարզորոշ կերպով սահմանեցին կոմյերիտմիության դերն ու նշանակությունը, վորպես յերիտասարդության մասսայական կազմակերպություն, վորը կոչվուծ և կուսակցության ղեկավարությամբ գասափարակելու յերիտասարդությանը կոմունիմի վոգով:

ՈԿՅԵՄ 2-րդ համագումարը քննարկեց հետեւյալ հարցերը՝ ընթացիկ մոմենտի մասին, ՈԿՅԵՄ կերպով հաշվետվությունը, զեկուցումներ տեղյարից, Կարմիր Բանակի շենարարությանը կոմյերիտմիության մասնակցության մասին, դյուզում տարվելիք աշխատանքի մասին, բանվորական յերիտասարդության ֆիզիկական զարգացման մասին և մի շարք կազմակերպչական հարցեր:

2-րդ համագումարում հիմնական հարցեր կոմյերիտականների մորիլիզացիայի հարցը՝ հարավային ճակատի համար, Դենի-

կլնի դեմ: Համագումարն ընդունեց հետեւյալ վորոշումները:

«1. Հանրապետությունը պաշտպանելու և ճակատն ու Կարմիր Բանակի թիկունքն սպասարկելու համար անցկացնել միության անդամների մոբիլիզացիա՝ 16 տարեկան հասակից:

2. Մոբիլիզացիան անց և կացվում հետեւյալ չափով՝

ա) Այն կազմակերպությունները, վուրսնք գտնվում են Որլովի, Տուլայի, Վորոնեժի, Տամբովի, Ռյազանի, Կալուգայի և Մոսկվայի նահանգների հարավային ճակատի ամրացման սելտում, անց են կացնում ընդհանուր մոբիլիզացիա:

բ) Մնացած կազմակերպությունները մոբիլիզացիայի յեն յենթարկում միության անդամների $30^{\circ}/_{\circ}$ -ը, 16 տարեկան հասակից ակսածք։

Համագումարը հանձնարարեց ՌԿՅԵՄ կենտկոմին՝ մոբիլիզացիայի մասին վորոշման կալակցությամբ կոչով դիմել բոլոր

կոմյերիտականներին: Կոմյերիտականների յերկրորդ համառուսական մոբիլիզացիան՝ դեպի հարավային ճակատը՝ անցավ մեծ խանդավառությամբ և ճակատին տվեց 10 հազար մարդ: Պետրոգրադը Յուդենիչից պաշտպանելու համար մոբիլիզացիայի յենթարկվեցին 1500 կոմյերիտականներ:

Համագումարը պարտավորեցրեց բոլոր կոմյերիտական կազմակերպություններէն ակտիվ մասնակցություն ունենալ Կարմիր Բանակի շինարարությանը, կարմիր բանակայինների քաղաքական լուսավորության գործին: Համագումարը հաստատեց ՌԿՅԵՄ կենտկոմի վորոշումը միության բոլոր կազմակերպություններում պարտադիր ռազմական ուսուցում անցկացնելու մասին:

Համագումարը կոչով դիմեց ամբողջ աշխարհի պրոլետարական յերիտասարդությանը, կոչ անելով՝ ուժեղացնել իրենց ոգոնությունը Խորհրդային հանրապետությանը, սահմանել պայքարի միասնական ճակատ ինտերվենտների դեմ և ստեղծել հե-

դափոխական յերիտասարդության միջազգային միավորում—յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալ:

Կոմյերիտմիությունն իր պատմության ամբողջ ընթացքում աճեց ու կոփվեց կուսակցության և սոցիալիզմի թշնամիների գեմ մղած պայքարում: Կոմյերիտմիությունն իր շարդ համագումարում, կուսակցության ղեկավարությամբ վճռական հականարկած տվեց Դունայելվալու անարխոսինդիկալիստական խմբակին, վորը հանդես յեկալ կոմյերիտմիության դերի և ինսդիբների հարցում հակալուսակցական դրույթներով: Դունայելվակին առաջարկում եր բանվորական և գյուղացիական դեպուտատաների խորհուրդներին կից ստեղծել հատուկ «բանվորական յերիտասարդության խորհուրդներ», պրոֆմիություններում կազմակերպել յերիտասարդական սեկցիաներ, առաջ քաշեց կոմյերիտմիության «պետականացման» արդյունական լոգունգը:

Դունայելվակու դլխավորած հակակուսակ-

ցական խմբակը փորձում եր կոմյերիտմիությունը կտրել յերիտասարդական մասսաներից, կտրել պլուտուսարական յերիտասարդությունը բանվոր դասակարգից, յերիտասարդության շահերը հակադրել ընդհանուր պլուտուսարական շահերին, վիժեցնել կուսակցության ղեկավարությունը կոմյերիտմիության նկատմամբ:

Դունայելվականները հանդես յեկան հականեղափոխական անարխոսինդիկալիստական տարրերի դիրքերից և հանդիսանում եին նրանց գործակալությունը կոմյերիտմիության մեջ: Համագումարը վճռականապես մերժեց այդ հակալուսակցական խմբակի առաջարկությունները:

ԾկՅԵՄ շարդ համագումարի նշանակությունն այն է, վոր նա համախմբեց յերիտասարդությանը կուսակցության շուրջը և մորիկիդացիայի յենթարկեց նրան՝ պաշտպանելու հայրենիքը միջազգային և ներքին հականեղափոխության դրույթը:

Վ. Ի. Լենինն այս շրջանում յերիտա-

սարգության կոմունիստական շարժմանը
մեծ ռազմագություն եր նվիրում: 1919 թվի
ապրիլին Վ. Ի. Լենինը հանդես յեկավ մի
ճառով կոմունիստ ռւսանողների համառու-
սական համագումարում, վորի արդյունքն
յեղավ այն, վոր ռւսանողական կազմակեր-
պությունները միացան կոմյերիտմիության
հետ:

1919 թվին հուլիսին «Բոլորդ գեպի պայ-

քար Դենելինի գեմ» վերտառությունը
կրող, կուսակցական կազմակերպություննե-
րին ուղղած ԾԿ(բ)Կ կերպությունինը
Լենինը մատնանշում եր, վոր պրոլետարիա-
տի գիտատուրայի խնդիրների իրագործ-
ման համար արագ կերպով աճում են նոր,
հզոր ուժեր, ի գեմս բանվորական և գյու-
ղացիական յերիտասարդության, վորն իր
միջից կոփում ե առկուն կոմունիստներ:

Նույն թվի գեկանմբերին Վ. Ի. Լենինը
վողջույն ուղարկեց Պետրոգրադի նահանգի
բանվորական և գյուղացիական յերիտասար-
դությանը՝ միության մեջ բանվորական և



1919 թիվ: Պետականը կամցրի պատճենահանությունը շաբաթ-
թորոշելի ժամանակ, աչ կազմում, վերջինը
բնկ. Կոստահեր:

(Այս գնումնի վերաբարձրություն)

գյուղացիական յերիտասարդության հավաքագրման շաբանցամբ անցկացնելու կապակցությամբ։ «Ռւժեղացրեք, յերիտասարդ ընկերներ, — զրում եք Վ. Ի. Լենինը, — ձեր աշխատանքը..., վորպեսզի թարմ յերիտասարդութերով ձեռնարկեք նոր լուսավոր կյանքի կառուցմանը»¹։



ՈԿՑԵՄ Յ-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կոմյերիտմիության Յ-րդ համագումարը կայացավ 1920 թվի հոկտեմբերի 2—10-ին։ Այստեղ ներկա ելին 529 պատգամավոր։ Համագումարը հավաքվեց քաղաքացիական պատերազմը վերջանալուց մի քիչ առաջ, այն ժողովակին, յերբ կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը սկսեցին նախապարաստել անցումը ռազմական կոմունիզմի քաղաքականությունից նոր տնտե-

¹ Վ. Ի. Լենին։ Յերկեր հ. 30, եջ 398։

սական քաղաքականությանը: Այդ ժամանակ ջախիչ ջախիչ էր Անտանտայի Յարդարշակը իսորհուրդների յերկրի վրա, վորն սկսվել էր 1920 թվի ապրիլին, Պիլսուզսկու լեհական լեգեոնների հարձակումով: Կարմիր Բանակը վոճնչացնում էր Ղրիմում ամբացած անգլիական ու ֆրանսիական բանկիրների կողմից զինված լարոն Վրանգելի սպիտակ բանակը:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգը լարեցին բոլոր ուժերը, վորպեսզի վոչընչացնեն արտաքին և ներքին թշնամիներին, լիկվիդացիայի յենթարկեն քաղաքացիական պատերազմի ճակատները և սկսեն խաղաղ սոցիալիստական շինարարությունը: Արդեն 1920 թվի ապրիլին կուսակցության 9-րդ համագումարը կոչ արեց աշխատավորությանը՝ պայքարելու տնտեսական քայլայման դեմ և վորոշում կայացրեց միասնական տնտեսական պլանի մասին, արդյունաբերության, տրանսպորտի և պյուղատնտեսության ելեկտրիֆիկացիայի

մասին, վառելանյութի մասին, հացի համար պայքարելու մասին:

1919—1920 թվականները նշվում են կոմյերիտականների, բանվորական և գյուղացիական յերիտասարդության հերոսական ուղաքարով բազմաթիվ ճակատներում—սպիտակ գվարդիական հրոսակների և ոտարերկրյա ինտերվենտների բանակների գեմ: Միությունն անցկացրեց կոմյերիտականների համառուսական գինվորական յերեք մորթիվացիա: Վերջին մորթիվացիան 1920 թվի մարտին, Պիլսուզսկու դեմ, արևմտյան ճակատին տվեց 3.000 մարդ: Թիկունքում կոմյերիտականները, բանվորական և գյուղացիական յերիտասարդությունն ակտիվորեն մասնակցում են ին կուսակցության կողմից անցկացվող մասսայական կամպանիաներին՝ արդյունաբերական կենտրոններին հաց հասցնելու համար մղվող պայքարին, եպիգեմիայի գեմ մղվող պայքարին, աշխատանքային շաբաթորյակներին, գյուղում կատարվող կուլակային ապստամբու-

թյունների, քաղաքում յեղած ըռւրժուական
ինտելիգենցիայի հականեղափոխական սա-
րուտաժի դեմ տարվող պայքարին։ Միու-
թյունն արագորեն աճում էր։ Հրդ համա-
գումարից մինչև 3-րդ համագումարն ընկած
ժամանակաշրջանում, այն եւ մեկ տարում,
ՈԿՅԵՄ անդամների թիֆս աճեց 96 հազա-
րից մինչև 400 հազարի։ Միության աշխա-
տանքի մեջ լուրջ թերություն եր հանդիսա-
նում գաստիարակչական աշխատանքի թու-
լությունը։ Սրա կապակցությամբ ՈԿՅԵՄ
շարքերում մեծ հոսունություն եր նկատվում։
ՈԿՅԵՄ 3-րդ համագումարն ոգնեց կոմյերիտ
միությանը վերակառուցելու իր աշխատանք-
ները համապատասխան սոցիալիստական
շինարարության նոր պայմանների և նոր
խնդիրների։ ՈԿՅԵՄ հետագա ամբողջ աշ-
խատանքի համար 3-րդ համագումարը հըս-
կայական նշանակություն ունի, վորովհե-
տե յերիտասարդական միության խնդիր-
ների մասին զեկուցումով հանդես յեկալ
Վլադիմիր Իլիչ Լենինը։ Տնտեսական քայ-

քայման պայմաններում, յերբ գեռես վերջ-
նականապես չեյին վերացված քաղաքա-
ցիական պատերազմի ճակատները, ու. ի.
Լենինը հանձարեղ կանխատեսությամբ, հըս-
կայական խորությամբ ու վորոշակիությամբ
կոմյերիտմիության առաջ գրեց նրա աշ-
խատանքի արմատական խնդիրները, աշ-
խատանք, վորը նախատեսնվում եր մի
տմբողջ եպոնայի համար։ Այդ հրաշալի
ձառը Լենինյան կոմյերիտմիության աշխա-
խատանքի մեջ ծառայում եր և ծառայում
է վորպես ուղեցույց աստղ։ Նա հանդիսա-
ցավ վորպես ծրագրային փաստաթուղթ,
վորը վորոշեց կոմյերիտմիության, վորպես
բանվորական և գյուղացիական յերիտասար-
դության մասսայական կազմակերպության
հետագա ամբողջ գործունեյության ուղղու-
թյունը, վորը կուսակցության զեկավարու-
թյամբ ապահովեց խորհրդային ժողովրդի
յերիտասարդ սերնդի բազմակողմանի կոմու-
նիստական դաստիարակությունն ու կըթու-
թյունը։

Յ-րդ համագումարի նշանակությունն այն
իր, վոր նա վերջնականապես ձևակերպեց
կոմունիստական յերիտասարդական շարժու-
մը խորհրդային յերկրում։ Համագումարը
քննարկեց հետեւյալ հարցերը՝ խորհրդային
հանրապետության միջազգային և ներքին
գրության մասին, յերիտասարդության կո-
մունիստական խնտերնացիոնալի մասին, ել
հաշվետու զեկուցումը, բանվորական յերի-
տասարդության սոցիալիստական կրթու-
թյան մասին, յերիտասարդության փիզի-
կական զարգացման մասին, ՈԿՅԵՄ կանո-
նադրության և ծրագրի մասին։

Համագումարը մի շարք կարեռը պուլյն
վորոշումներ կայացրեց յերիտասարդության
աշխատանքի ու կրթության հարցերի շուր-
ջը, մասնավորապես ֆաբրիկա-դորձարանա-
յին աշակերտության դպրոցներ ստեղծելու
մասին։ Համագումարն առաջարկեց բոլոր
կոմյերիտական կազմակերպություններին՝
վճռական կուրս վերցնել միության մեջ
պրոլետարական կորիզն ուժեղացնելու ուղ-

ղությամբ և իր աշխատանքի կենտրոնը
փոխադրել միության անդամների շարքե-
րում յեղած քաղաքական անդրագիտու-
թյան վերացման վրա, ակտիվի նոր կազ-
րեր պատրաստելու և գաստիարակելու վրա։

Յ-րդ համագումարը ձևակերպեց ՈԿՅԵՄ-ի
մուտքը յերիտասարդության կոմունիստա-
կան խնտերնացիոնալի մեջ։ Յերիտասար-
դության կոմունիստական խնտերնացիոնալի
ստեղծման գործում բոլշևիկյան կուսակ-
ցությունն ու կոմյերիտամիությունը վճռա-
կան գեր խաղացին։

ՈԿՅԵՄ Յ-րդ համագումարը վերջնակա-
նապես ջախջախեց անարխուսինդիկալիս-
տական թեքումը կոմյերիտամիության մեջ։
Կուսակցությունը հակայական ոգնություն-
ցույց տվեց կոմյերիտամիությանը նրա պայ-
քարում «Դունայեկշինա»-յի վեմ։ ՈԿՅԵՄ
Յ-րդ համագումարից առաջ ՈԿ(Բ)Կ կկ իր
նամակում, ուղղված կուսակցական բոլոր
կոմիտեներին, կուսակցական կազմակեր-
պությունների ուշադրությունը դարձեց

կումսումոլում անարխուսինսդիկալիստական
թեքման գեմ, Դունայիվսկու գեմ վճառկան
ոլայքար վարելու անհրաժեշտության վրա:
Այն բանից հետո, յերբ Դունայիվսկու հա-
կալուսակցական հայացքները դատապարտ-
վեցին ՌԿՅԵՄ Հ-րդ համագումարի կողմից,
Դունայեվսկին և նրա խմբակն սկսեցին ել
ավելի կատաղի պայքարել կուսակցության
դեմ: Դունայեվսկին կոմյերիտական զիկա-
վար աշխատավներին մի նամակ ուղարկեց,
վորտեղ նա ՈՒ(բ)Կ ԿԿ-ի գեմ պայքարելու
հականեղափոխական պլանն եր զարգաց-
նում՝ հակագրելով կոմյերիտմիությունը
կուսակցությանը:

Դունայեվսկու հետ դաշնակցած Յ-րդ
համագումարում յելույթ ունեցավ ուկրաի-
նական ովողիցիան (այսպէս կոչված «կլա-
սովիկները»), զորն առաջարկում եր զա-
գարեցնել ուսանող յերիտասարդության և
առհասարակ խորհրդային յերիտասարդ ին-
տելիգենցիայի ընդունելությունը միության
մեջ, կոմյերիտմիությանը գուգահեռ քաղա-

քում բանվորական յերիտասարդության,
իսկ գյուղում գյուղացիական յերիտասար-
թյան անկուսակցական կունկալիքներ ստեղ-
ծել:

Կերջինը գործնականում կնշանակեր
ստեղծել յերիտասարդության կունկալիքն
կազմակերպություններ: «Կլասովիկները»
անցկացնելով բուրժուական նացիոնալիստ-
ների տեսակետը, պնդում ելին, վորպեսզի
Ռէկրախնայի յերիտասարդական կազմա-
կերպություններն անկախ լինեն ՌԿՅԵՄ-ից:

Դունայեվսկին և «կլասովիկները» կու-
սակցության մեջ յեղած հականեղափոխա-
կան այսպես կոչված «բանվորական ոպո-
վիցիայի» գործակալությունն ելին: Նրանք
հանդիս ելին գալիս կուսակցության գեմ,
միության մեջ կուսակցական զեկավարու-
թյան գեմ: Նրանք արտացոլում ելին բոլ-
շևիզմին թշնամի տրոցիկոստական և անար-
խուսինդիկալիստական տարրերի ազդեցու-
թյունը:

Կոմյերիտմիությունը, կուսակցության

զեկավարությամբ, մերկացրեց «կոմյերիտամիության դասակարգայնության» մասին հեղափոխական ֆրազներով՝ քողարկված ուլրաինական ուղղիցիայի բուրժուանացիոնալիստական պլատֆորման, դատապարտեց և վճռականորեն մերժեց այդ հակակուսակցական խմբակների բոլոր առաջարկները։ Կոմյերիտամիության Յ-րդ համագումարից հետո կուսակցության կկ կուսակցական կազմակերպություններին ուղարկեց մ՛նամակը, վորով պարտավորեցնում եր կուսակցական կազմակերպություններին՝ առաջնովել ամենայն աջակցություն ՈՒՅԵՄ-ին, նրա աշխատանքի մեջ։ Կկ-ն առաջարկեց կուսակցության յերիտասարդ անդամներին, մինչև 20 տարեկան հասակը ներառյալ, կոմյերիտամիության աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունենալ, իսկ կուսակցական կոմիտեներին՝ ուժեղացնել իրենց ներկայացուցչությունը ՈՒՅԵՄ կոմիտեներում, միության մեջ աշխատելու համար մորիլիվացիայի յենթարկել լավա-

գույշն լեկտորներին ու ագիտատորներին, ապահովել միության անդամների քաղաքական բաւարձությունը և այլն։

1920 թվի վերջերին հրապարակվեցին Վ. Ի. Լենինի գիտողությունները Նազեմդղակունստանատինովնա Կրուպսկայայի պոլիտեխնիկական թուրթության վերաբերյալ թեզիների առթիվ, վորոնք հետազայում մեծ գեր խաղացին գպրոցական շինարարության մեջ միության ճիշտ գիծ սահմանելու գործում։



ՈԿՅԵՄ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՈԿՅԵՄ 4-րդ համագումարը կայացալ 1921 թվի սեպտեմբերի 21—28-ին։ Համագումարը հավաքվեց ժողովրդական տնտեսությունը վերականգնելու խաղաղ աշխատանքի անցման շրջանում։ Այդ ժամանակ Կարմիր Բանակը լիակատար հաղթանակ տարավ քաղաքացիական պատերազմի բռնության մեջ ակտատներում։

Զեսնաբկելով խաղաղ սոցիալիստական շինարարությանը, կուսակցությունը բախվեց բոլցելիզմի ամենաչարանինք թշնամու — արոցիկիստների ու բուխարինյանների — կատաղի գիմադրությանը, վորոնք կուսակցության վզին փաթաթեցին գիսկուսիան պրոֆմիությունների մասին։ Կուսակցությունը, Լենինի և Ստալինի զերավարությամբ, արոցիկիստների ու բուխարինյանների գեհ մղած վճռական պայքարում հետևողականորեն իրագործում եր մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու իր վերցրած կուրսը։

1921 թվի մարտին ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարն իր բանաձեռմ, ընդունված Լենինի զեկուցման առթիվ, աղջարարեց անցումը նոր անտեսական քաղաքականությանը, վորն ի նկատի ուներ ԽՍՀՄ ժողովը բական անտեսության սոցիալիստական ունկնատրուկցիան և սոցիալիզմի կառուցումը։

Համագումարը մերժեց արոցիկիստական բանաձեռ պրոֆմիությունների հարցի մա-

սին, ջախչախեց կուսակցության մեջ յեղած անարխուսինդիկալիստական թեգումը («բանվորական սպողիցիան») և ընդունեց Լենինի բանաձեռ կուսակցության շարքերի միասնության պահպանման մասին։

Միության ուշագրությունը ՌԿՅԵՄ 3-րդ և 4-րդ համագումարների մեջ ընկած ժամանակաշրջանում ուղղված եր գլխավորապես ՌԿՅԵՄ շարքերի կազմակերպչական ամրապնդման և նրա աշխատանքը նոր պայմաններին հարմարեցնելու վրա։ Նոր տնտեսական քաղաքականության անցնելն սկզբի շրջանում կոմյերիսմիության աշխատանքների վրա հիվանդագին կերպով անուրագարձավ։ Կոմյերիսմիությունը չկարողացավ անմիջապես կողմնորոշվել այն նոր պայմաններում, վորոնք ստեղծվել ելին նեղը մացնելով, չսովորեց գեռես ճիշտ աշխատել և բավարարել յերիտասարգության նոր պահանջները։

4-րդ համագումարի որերին չափազանց սուր կերպով գրվեցին բանվորական յերի-

առասարգության աշխատանքի, կենցաղի և
կրթության հարցերը։ Յերիտասարգության
դրությունը ձեռնարկություններում այդ
ժամանակ բավականին անկայուն եր, վո-
րովհետեւ յերիտասարգությունը, վորպիս
բանվորների ամենից քիչ վորակավոր մա-
սը, հաստիքների կրծատման գեղքում մյուս-
ներից ավելի հաճախ եր աշխատանքից ար-
ձակվում։ Գործազրկությունն այդ շրջանում
յերիտասարգության մեջ զգալի յեր։

Կոմյերիտմիության առաջ զրվեց այն
խնդիրը, վոր կուսակցության ղեկավարու-
թյամբ անհրաժեշտ և աշխատանք ծավալի և
բանվորական յերիտասարգության վորա-
կավորումը բարձրացնելու, յերիտասարգու-
թյան աշխատանքի պաշտպանման համար,
պայքարել յերիտասարգությունը արտադ-
րության մեջ պահելու համար։

Կոմյերիտմիության առաջ զրվեց նույնա-
պես այն խնդիրը, վոր անհրաժեշտ և ու-
ժեղացնել պայքարը յերիտասարգության
առանձին շերտերի վրա տարածվող դասա-

կարգայնորեն թշնամի ազգեցությունների
գեմ, մանր բուրժուական տարրերքի ազ-
գեցության գեմ, վորն ուժեղացալ ՆԵՊ-ի
տռաջին տարիներին։

4-րդ համագումարի նշանակությունն
այն և, վոր նա նշեց միության աշխատանք-
ների վերակառուցման ուղիները՝ համապա-
տասխան նոր տնտեսական քաղաքականու-
թյան պայմաններին, յերիտասարգության
համար տարվող պայքարը նոր պայմանն-
երին։

ՈԿՅԵՄ 4-րդ համագումարում ներկա
ելին 614 պատգամավորներ, վորմաք ներ-
կայացնում ելին 415 հազար կազմակերպ-
ված յերիտասարգություն։ 4-րդ համագու-
մարը քննարկեց հետևյալ հարցերը. հան-
րապետության ներքին և միջազգային
դրության մասին, ԿԻՄ-ի 2-րդ կոնգրեսի և
յերիտասարգական միջազգային շարժման
մասին, ՈԿՅԵՄ կենտրոնի հաշվետվությու-
նը, բանվորական յերիտասարգության սո-
ցիալիտատական կրթության մասին, բանվո-

բական յերիտասարդության վիճակի մասին,
գպրոցական շինարարության մասին, միուշ
թեհական շինարարության հերթական խըն-
դիրների մասին:

4-րդ համագումարը ներքին և միջազ-
գային գրության մասին զեկուցման շուրջն
ընդունած վորոշումների մեջ նշեց, վոր կու-
սակցության 10-րդ համագումարի ընդու-
նած տնտեսական քաղաքականության գիւ-
ծը միակ ճիշտ գիծն ե, վոր տանում ե գե-
ղի սոցիալիզմի հաղթանակը:

ՈՒՅՑԵՄ հերթական խնդիրների մասին
բանաձեռւմ համագումարը մատնանշեց, վոր
կոմյերիտմիության գլխավոր խնդիրն ե
մասնակցել պետական այն որգանների աշ-
խատանքին, վորոնք սպասարկում են յերի-
տասարդությանը, ակտիվորեն ոգնել պրո-
լետարական պետությանն ու կոմունիստա-
կան կուսակցությանը, աղյանովել և անց-
կացնել կուսակցության աղյեցությունը
միության անդամների դաստիարակչական
աշխատանքում այնպես, վորպեսի նրանցից

պատրաստել այնպիսի աշխատողներ, վո-
րոնք կունենան հաստատուն կոմունիստա-
կան աշխարհակայացք և վորոնք ոգտակար
կլինին ժողովաստանի սոցիալիստական շի-
նարարության այս կամ այն բնագավառում:

Համագումարը մատնանշեց, վոր միու-
թյունը պետք է ակտիվորեն մասնակցի մեր
յերկրի արդյունաբերության ու գյուղա-
անակառության վերականգնման ու ամրա-
պնդման գործին:

Համագումարը մեծ ուշագրություն նվի-
րեց կոմյերիտմիության աշխատանքի արն-
տեսական հարցերին: Համագումարը մի
շաբք վորոշումներ ընդունեց, վորոնք վերա-
բերում եյին յերիտասարդության վիճակի
բարելավմանը, գնուհանների աշխատանքի
պաշտպանության մասին, հատկապես մանր
և անայնագործական արդյունաբերության
մեջ, բանվորական յերիտասարդության
կենցաղի բարելավման մասին, նրա աշխա-
տանքի վարձատրման մասին, մանուկների
անապատանության, սպեկուլիացիայի և

հանցագործությունների գեմ պայքարելու
մասին: Համագումարը վորոշում ընդունեց
գեռահամների բրոնխիայի մասին: Համագու-
մարը, գոլրոցական շինարարության մասին
զեկուցման առթիվ, անհրաժեշտ համարեց
լայն կերպով զարգացնել ֆարբիկա-գործա-
բանային աշակերտության գոլրոցները և
ամեն կերպ լավացնել նրանց աշխատանքը:

Համագումարն առաջարկեց կոմյերիտա-
կան կազմակերպություններին՝ ուժեղացնել
պայքարը յերիտասարդության վրա տա-
րածվող մանր-ըսուբդուլական աղդեցության
գեմ: Ներմիութենական շինարարության
հարցերի գծով համագումարն առաջ քաշեց
այն խնդիրը, վոր անհրաժեշտ և պահպա-
նել և ամրապնդել պրոլետարական կորիզը
միության մեջ պատրաստել ակտիվի նոր
կազմեր, ուժեղացնել կոմյերիտմիության
դաստիարակչական աշխատանքը, և մատ-
նանշեց կոմյերիտմիության գյուղում տար-
վող աշխատանքի խոշոր նշանակությունը:
ՈԿՅԵՄ 4-րդ համագումարի վորոշում

ների հիմքում գրվեցին կուսակցության
10-րդ համագումարի վորոշումները, վորը
կուսակցական շինարարության մասին բա-
նաձևում մատնանշեց կոմյերիտմիության
հակայական նշանակությունը ներկուստկ-
ցական կյանքի աշխուժացման գործում, կու-
սակցության շաբքերը նոր, գիտակից կու-
մունիստներով համալրելու գործում: Կու-
սակցության 10-րդ համագումարն առաջար-
կեց կուսակցական կոմիտեներին՝ «ոգնել
ՈԿՅԵՄ-ին կարգավորելու նրա անդամների
քաղաքական լուսավորության գործը և ո-
ժանդակել յերիտասարդությանը խորհրդա-
ցին և անտեսական շինարարության մեջ
ներգրավելուն»¹:

Պրօֆմիությունների գերի ու խնդիրնե-
րի մասին զեկուցման առթիվ, համագումարն
ընդգծեց պրօֆմիությունների վողջ աշխա-
տանքին յերիտասարդության ակտիվ մաս-
նակցության անհրաժեշտությունը: Համա-

¹ Համեմատական կոմյերիտմիության մասին: Եջ 12:

գումարը Գլխազգուտի և կուսակցության
ազիտացիոն-պրոպագանդիստական խնդիր-
քների մասին բանաձեռնմ պահանջեց կոմյե-
րիտմիության ակտիվիտից՝ ուժեղացնել պրո-
պագանդիստական աշխատանքը յերիտա-
սարգության մեջ:

1921 թվի նոյեմբերին ՌԿ(բ) և Կենտ-
կոմը, միության տշխատանքների ու խըն-
դիբների հետ կուսակցության բոլոր ան-
դամներին լայնորեն ծանոթացնելու նպա-
տակով, անցկացրեց ՌԿ(բ) և ՌԿՅԵՄ մեր-
ձեցման շարաթ:



ՈԿՑԵՄ 5-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կոմյերիտմիության 5-րդ համագումարը
կայացավ 1922 թվի հոկտեմբերի 11—19-ին:

Այդ ժամանակ մեր յերկրի աշխատա-
վորները, Լենինի-Ստալինի կուսակցության
գեկավարությամբ, նոր տնտեսական քա-
ռաքականությունը կյանքում անշեղորեն

անցկացնելու հիման վրա, ձեռք բերեցին
զգալի արդյունքներ սոցիալիստական շինա-
րարության գործում, յերկրի տնտեսության
վերականգնման ու ամրապնդման գործում:
Բարձրացավ սոցիալիստական արդյունաբե-
րության տեսակարար կշիռը և նրա առաջա-
տար գերը: Ակսվեց զյուղատնտեսության
վերելքը: Ամբացավ խորհրդային հանրապե-
տությունների ժողովուրդների բարեկամու-
թյունը: 1922 թվի վերջին Լենինի ու
Ստալինի նախաձեռնությամբ, խորհրդային
հանրապետությունները կամավոր կերպով
միացան և կազմեցին Խորհրդային Սոցիա-
լիստական հանրապետությունների Միու-
թյուն:

1922 թվի ապրիլին, կուսակցության
11-րդ համագումարում, Վ. Ի. Լենինը կու-
սակցության առաջ խնդիր դրեց, վոր ան-
հրաժեշտ և ծավալել պայքարը՝ ժողովրդա-
կան տնտեսության սոցիալիստական տար-
րերի կողմից կապիտալիստական տարերի
հաղթահարման համար, սոցիալիստական

անստեսության հիմքի կառուցման համար բանվոր զասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի ամրացման համար, սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության միջև մերձում կազմակերպելու համար:

Կոմյերիտմիությունն ակտիվորեն մասնակցում եր կուսակցության ամբողջ աշխատանքին՝ սոցիալիստական շինարարության գծով։ Բայց կոմյերիտմիության աշխատանքի մեջ 1921—22 թվերի շրջանում կային և բացասական յերևույթներ։ Այդ մասնավորապես արտահայտվեց նրանում վոր միության անդամների թիվը 1921 թվի 415 հազարից 1922 թվի վերջին իջակ 260 հազարի։

Կուսակցության 11-րդ համագումարը, վորը քննության առավ կոմյերիտմիության աշխատանքի հարցը, միության ապրած դժվարությունների բնույթը բնորոշեց հետեւալ կերպ՝ «միության անդամների նվազումը, վոր նկատվում և վերջերս շատ կազ-

մակերպությունների մեջ, բացատրվում է յերիտասարդությանը արտադրություննից արձակելով, միությունը զանազան մորիվ դացիսներով թուլացնելով և այլն, իսկ գըշխավորը՝ նրանով, վոր միությունը բավականաչափ չի հարմարված յերիտասարդության պահանջների բավարարմանը։ Միենուում ժամանակ նկատվում է ՌԿՅԵՄ ազգեցության թուլացումը բանվոր յերիտասարդության վրա»¹:

Կուսակցության 11-րդ համագումարն ընդունեց կոմյերիտմիության աշխատանքի մասին մի շարք կարևոր վորոշումներ։ ՌԿՅԵՄ հարցի մասին ընդունած բանաձեկի մեջ 11-րդ համագումարն արձանագրեց, վոր «ՌԿՅԵՄ-ը, վորը հանդիսանում է կոմունիստական դաստիարակության մասսայական կազմակերպություն, կուսակցության համար ծառայում է իբրև հզոր մի զենք՝ բանվորական և գյուղացիական յերիտասարդության առաջական գործառնություն»²։

¹ Նույն տեղ, էջ 16—17։

² ՀԿՅԵՄ Համագումարեները—4

թյան լայն շերտերի վրա կոմունիստական ներգործության և ազգեցության տարածման համար¹:

Բանվորական յերիտասարդությանը արտադրության մեջ պահպանելու նպատակով, կուսակցության համագումարն ընդունեց մի վորոշում՝ ձեռնարկություններում գեռահաս բանվորների նորմալ տոկոսը բրոնխիայի յենթարկելու մասին, նրանց աշխատանքի պաշտպանության բոլոր նորմաներն անցկացնելու անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին, աշխատանքը վերակառուցելու և բանվորական յերիտասարդության ուսուցանելու մասին: Համագումարն ընդգծեց, վոր կոմյերիտմիությունը մանրբուրժուական տարրերքի քայլքայիչ ազդեցությանը և հականեղափոխական կուսակցությունների՝ յերիտասարդության մեջ ազգեցություններուն ձեռք բերելու վորձերին պետք է հակագրի թշնամի տարրերի գեմ

¹ «Համեմություն կոմյերիտմիության մասին»: Եջ 15:

վճռական պայքարը և յերիտասարդության պահանջներին հարմարեցլած կուտուրա-դաքական յեռանդուն աշխատանքը:

Համագումարը մատնանշեց, վոր գյուղի կոմյերիտական կազմակերպությունները պետք ե գառնան կուսակցության ու խորհրդային իշխանության հենման կետեր: Համագումարը պարտավորեց կուսակցական կազմակերպություններին՝ ոգնություն ապահովել կոմյերիտմիությանը՝ նրա աշխատանքը նոր պայմաններին հարմարեցնելու գործում: 11-րդ համագումարում Վ. Ի. Լենինը, իր յեղբափակման խոսքում ՌԿ(Բ)Կ կենակոմի քաղաքական հաշվեավության առթիվ, սուր զբեց յերիտասարդության դաստիարակության հարցը, յերիտասարդության համար հասարակական գիտությունների գծով մարքսիստական դասագրքը քեր ստեղծելու հարցը:

Կուսակցության 11-րդ համագումարի վորոշումները զբվեցին ՌԿՅԵՄ 5-րդ համագումարի հիմքում:

Մինչև ՌկՅԵՄ 5-րդ համագումարի հրավիրման մոմենտը, 1922 թվի վերջերը, կուսակցությունն ու խորհրդային կառավարությունն ահագին աշխատանք կատարեցին: Բանվորական յերիտասարդության տնտեսական զրությունը բարելավելու և արտադրության մեջ յերիտասարդության կադրերը պահպանելու համար, խորհրդային կառավարությունը հրապարակեց մի շարք որենսդրական ակտեր, վորոնք պաշտպանում ելին յերիտասարդության աշխատանքն ու առողջությունը, մացրեց զեռահամերի բրոնիան, ընդարձակեց ֆարզործումների ցանցը և այլն: Սրա կապակցությամբ ել միության ուշադրությունն զգալիորեն ավելի մեծ չափով, քան առաջ, կարող եր կենտրոնացած լինել ակտիվի դաստիարակչական աշխատանքի դրվածքի վրա, յերիտասարդության մեջ մասսայական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքը ժամանակակից վրա: Այս հարցերը մտներամաս-

նորեն քննարկեց ՌկՅԵՄ 5-րդ համագումարը:

Համագումարին ներկա եյին 317 պատգամավոր: Համագումարի որոշկարգում զբարված եյին հետեյալ հարցերը, հանրապետության միջազգային և ներքին զրության մասին, յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի մասին, ՌկՅԵՄ կենտկոմի հաշվետու գեկուցումը, յերիտասարդության կոմունիստական դաստիարակության մասին՝ նոր տնտեսական քաղաքականության սլայմաններում, գյուղում տարվող աշխատանքի մասին, բանվորական յերիտասարդության կրթության մասին:

5-րդ համագումարի նշանակությունն այն է, վոր նա լայն կերպով գրեց նոր անտեսական քաղաքականության սլայմաններում յերիտասարդության կոմունիստական դաստիարակության հարցերը:

Համագումարը մի շարք վորոշումներ ընդունեց միության մեջ մարքսիստական կրթության և կուլտուրական աշխատանքի

զրվածքի մասին: Համագումարը մատնանը՝ շեց, վոր գյուղի բոլոր կոմյերիական կազմակերպությունները պետք և մատնակցեն խորհրդային շինարարությանը. գյուղացիական յերիտասարդության մեջ պետք և ծավալել մասսայական քաղաքական: Կուլտուրական աշխատանք:

Համագումարն առաջ քաշեց գյուղացիական յերիտասարդության դպրոցների կազմակերպման հարցը:

5-րդ համագումարն սկիզբ դրեց մանկական կոմունիտատական շարժմանը, ձևակերպելով պատանի պլիսներների կազմակերպությունը: 5-րդ համագումարում ընդունվեց շեֆությունը հանրապետության ստղմոծովային նախատորմի նկատմամբ:

5-րդ համագումարը Ա. Ի. Լենինից վաղջույն ստացավ: Դա Լենինի վերջին վաղջույնն էր կոմյերիտակությանը:

«Թանգաղին բարեկամներ,—դրում եր Վլադիմիր Իլիչը:—Շատ եմ ափսոսում, վոր մնձամբ չեմ կարող վաղջույն կազ:

Յանիանում եմ ձեր 5-րդ համագումարի աշխատանքներին ամենայն հաջողություն, հավատացած եմ, վոր յերիտասարդությունը կկարողանա զարգանալ այնպիսի հաջողությամբ, վորպեսզի համաշխարհային հեղափոխության հաջորդ մոմենտի հասունացման ժամանակ կատարելապես լինի խնդիրների բարձրության վրա:

ԶԵՐՄ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՎՐԱՋՈՒՅՆ
Վ. ՈՒԼՅԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)»¹

Պատասխան վողջույնի մեջ համագումարը հավաստիացրեց Վլադիմիր Իլիչին, վոր միությունը կհաղթահարի բոլոր գժվարություններն իր աշխատանքներում և ակտիվ մասնակցություն ցույց կտա սոցիալիստական շինարարությանը:



¹ Ա. Ի. Լենին, Յերկեր հ. 27, էջ 306:

ՌԿՑԵՄ 6.ՐԴ ՀԱՄԱԳՈՒՅՄԱՐԸ

Կոմյերիտմիության 6-րդ համագումարը կայացավ 1924 թվի հուլիսի 12—18-ին։ Համագումարը հավաքվեց Վ. Ի. Լենինի մահվանից կես տարի անց։ Կոմունիստական կուսակցությունը վեր բարձրացրեց և առաջ տարապէ Լենինի դրոշը, լճինյան հավատարիմ աշակերտ ընկ. Ստալինի ղեկավարությամբ։ Խորհուրդների 2-րդ համագումարի արիբունից հնչեցին ստալինյան մեծ յերդման խոսքերը։ Ընկ. Ստալինից հետո այդ անմահ բաները կը կնեցին միլիոնավոր աշխատավորները, յերդվեցի մեռած առաջնորդի դագաղի առաջ անաղարտ պահել լենինյան մեծ դրոշը և անշեղորեն իրադրել Լենինի պատգամները։ Խորհրդային յերկրի բանվոր դասակարգը և աշխատավորներն ել ավելի սերտ համախմբվեցին լճինյան կուսակցության շուրջը։ Տաճանյակ հաղարավոր բանվորներ մտան կուսակցության մեջ, վորպեսզի նրա շարքերում

արումսակեն Լենինի գործը։ Լենինյան կոչը կոմյերիտմիությանը տվեց 240 հազար նոր անդամներ։

Այն ժամանակ, յերբ աշխատավորության միլիոնավոր մասսաներն ավելի ու ավելի սերառեն և յին համախմբվում կուսակցության շուրջը, վորպեսզի ել ավելի համառորեն պայքարեն մեր յերկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պատգամների իրագործման համար, կուսակցության թշնամիները — տրոցկիստները — ավելի ու ավելի և յին ուժեղացնում իրենց գրոհը կուսակցության գլխավոր գծի վրա, իրենց գաղրելի, քայլքայիչ աշխատանքը։ Սպեկուլիացիայի յենթարկելով այն անտեսական գժվարությունները, վոր ապրում եր մեր յերկրը (արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների գների առարկարությունը, արդյունաբերական ապրանքների վաճառահանման ճգնաժամը), տրոցկիստները 1923 թվի աշնանը հանգիս յեկան չարանենք զրպարտանքով կուսակցական ղե-

կավարության հանդեպ, աշխատելով ձախուղելսոցիստական շինաբարության գործը:

Հականեղափոխական արոցկիստական պլատֆորմայի կետերից մեկը յերիտասարդության հարցն եր:

Տրոցկիստները փորձում եյին կոմյերիտմիությունը հակադրել կուսակցության հիմնական կազրերին ու նրա կենտկոմին: Ուսանող յերիտասարդությանը արոցկիստները պատկերում եյին վորպես կուսակցության «բարոմիտը», քննությամբ ու գեմագոգիայով արոցկիստներն աշխատում եյին յերիտասարդությանը թեքել իրենց կողմը:

Մակայն արոցկիստներին չհաջողվեց յերիտասարդությանը շեղել լենինյան ճանապարհից: Կոմյերիտմիությունը, կուսակցության գեկավարությամբ, ջակիչախիչ հականարված տվեց արոցկիստների փորձերին՝ սգտակործելու յերիտասարդ սերունդը կուսակցության վրա զբոհելու համար: Տրոցկիստական վառնձգությունները կոմյերիտական կազմակերպություններում վերջա-

յան դավաճանների կատարյալ տապալումով: Կուսակցությանը թշնամի արոցկիստական «թեորիաները» «կուսակցության բարոմիտը» մասին ջախջախվեցին: Կոմյերիտմիությունը հակակուսակցական թեքումների գեմ մղած պայքարում վճռաբարդատապարտեց նաև կոմյերիտմիության չեղոքության վերաբերյալ յեղած ողբորունկիստական «թեորիան»:

Կուսակցության կողմից արոցկիմի գեմ մղած լարված պայքարի պայմաններում ավելի ու ավելի մեծ նշանակությունն երսանում յերիտասարդ սերունդի բոլշևիկյան դաստիարակությունը:

Այս կապակցությամբ կուսակցության 12-րդ և 13-րդ համագումարները մատնանշում եյին, վոր կուսակցառության առաջնութիւնը և գրված՝ յերիտասարդ կազրերին հաղորդել բոլշևիկումի մարտական տրապեցիաները, կուսակցության՝ բանվոր դաստիարակության վրա գործելու համար կամ թշնամիների գեմ մղած հեղափոխական կամ պայքարի փորձը, ողբորունկիմի գեմ

մզած պայքարի փորձը, յերիտասարգությանը մանրադնին կերպով ծանոթացնել կուսակցության ծրագրի ու տակտիկայի հետ։ Ընկեր Ստալինը միշտ հակայական ուշադրություն եր համակացնում յերիտասարգության բոլշևիկյան գաստիարակության գործին։ Ընկեր Ստալինը հանգես գալով կռւսակցության 12-րդ համագումարում, մատնանշում եր, վոր կոմյերիտմիությունը հանդիսանում է շարժափոկերից մեկը, վորը կապում է կուսակցությանը բանվոր զատուկարգի հետ, վոր կոմյերիտմիությունը և բնդհանրապետությունը և կայական նշանակությունը ունեն կուսակցության համար և վոր «յերիտասարգություն ֆրոնտը պիտի համարել առանձնապես սպառնալիքի տոկ, նկատի ունենալով, վոր մեր կուսակցության հակառակորդների գրոհներն այս բնագավառում հատկապես համառ են»¹։

¹ Ի. Ստալին «Կոմյերիտմիության մասին», Էջ 6։

Կուսակցության 13-րդ համագումարից առաջ, 1924 թվի ապրիլին Համ Կ(Բ)Կ կԿ-ին կից տեղի ունեցավ մի խորհրդակցություն՝ յերիտասարգության մեջ տարվելիք աշխատանքի մասին։ Ընկեր Ստալինը հանգես գալով այդ խորհրդակցությանը, պարզուց կերպով բնորոշեց կոմյերիտմիության գելն ու հիմնական խնդիրները։

«Յերիտասարգության կոմունիստական միությունը, — ասում եր ընկեր Ստալինը, — ուեղերվ և, ուեղերվ՝ կազմված գյուղացիներից և բանվորներից, վորտեղից կուսակցությունը համալրումներ և վերցնում։ Բայց նա, գըտ հետ միասին, նաև մի գործիք և, մի գործիք կուսակցության ձեռքին, վորն իր ազգեցության և յենթարկում յերիտասարգության մասսաներին»¹։

1924 թվի ապրիլին Համ Կ(Բ)Կ կազմույուրոյի նիստում՝ գյուղի կոմյերիտական ակտիվի մասին արտասահմած իր ճառում,

¹ Նույն տեղը, Էջ 12։

Ընկ. Ատալինը կոմյերիտմիության առաջ յերեք հիմնական խնդիրներ դրեց:

«Առաջին խնդիրն այն է, վորպեսզի ապահովի յերիտասարդական միության համար նրա հիմնական պրոետարական կորիզը, վորպես մի կորիզ, վորը գեկավարում ե ամբողջ միությանը...»

Յերկրարդ խնդիրն այն է, վորպեսզի պրոտեղական կորիզի աշխատողները ճիշտ տեղադրվեն հանգույցային կետերում և միության հիմնական ռայոններում, այդ կորիզի ուժերով յերիտասարդության գյուղացիական մասի նկատմամբ ռեալ դեկարտությունն ապահովելու համար...

Յերրորդ խնդիրն այն է, վորպեսզի դյում կոմյերիտմիության համար ապահովել դյուլացիական յերիտասարդության բազմամարդ ակտիվ, քաղաքականապես գաստիարակել այդ ակտիվը նրան գարձնել կացնողը դյուլում¹:

Ընկեր Ատալինն ասում է, վոր կոմյերիտմիության ակտիվը, նրան համարեն ողատագործելու գեղքում, կարող և մեծագույն ուժ կազմել, վորն ընդունակ կլինի հրաշք ներ գործել: Կուսակցության 13-րդ համագումարը, գեկավարվելով ընկ. Ատալինի այս ցուցմոնքներով, ՈՒՅԵՄ աշխատանքի մասին կարևոր վորոշումներ ընդունեց:

Կուսակցության 13-րդ համագումարը մատնանշեց, վոր կոմյերիտականները պետք լինեն կուսակցության ոգնականները նրա բոլոր աշխատանքների մեջ: Համագումարը նշեց, վոր կոմյերիտմիության կարեռագույն խնդիրն ե՝ բարձրացնել միության հասարակական-քաղաքական ակտիվությունըն ամբողջությամբ վերցրած և նրա յուրաքանչյուր անդամինը՝ առանձին վերցրած: Համագումարը մատնանշեց, վոր կոմյերիտմիությունը ճշտորեն պետք և զուգակցիկ յերիտասարդության մեջ տարվելիք քաղա-

¹ Նույն տեղը, էջ 19—21.

Քական և կուլտուրական տշխատանքը: Գյուղ-
գում տարվելիք աշխատանքի մասին բա-
նաձեռն համագումարն ընդգծեց այն բա-
ցառիկ համակությունը, վոր ստանում են
կոմյերիտական կազմակերպությունները
գյուղում: Մամուլի մասին ընդունած բա-
նաձեռն համագումարն անհրաժեշտ ճանա-
չեց ստեղծել համառուսական կոմյերիտա-
կան լրագիր:

Կոմյերիտամիության 6-րդ համագումարն
իր աշխատանքների հիմքում դրեց կուսակ-
ցության 13-րդ համագումարի դիրեկտիվ-
ները: 6-րդ համագումարին ներկա եյին 979
պատգամափորներ, վորոնք ներկայացնում
եյին 700 հազար յերիտասարդություն: 5—
6-րդ համագումարն ընկած ժամանակաշրբ-
ջանում միության աշխատանքը նշանակա-
լից չափով աշխաժացավ: Դրան նպաստեց
կոմյերիտամիության մեջ տեղի ունեցած
դիմումների մասին: Այդ դիմումների ժա-
մանակ լրիվ կերպով ջախջախվեց հոկախոր-



Մի հասկած այն վարչումից, վորով ԱկՅեմ
Վ Համագումարը շնչառթյուն ընդունեց Կար-
միր նախարարի նկամամար:

(Սովորված. Ար. Զանովի
վեարակուրիունի)

հըրդային արոցկիստական պլատֆորման,
 վորը ջանում եր ձախողել կոմյերիտմիության
 աշխատանքը: Կուսակցության և խորհրդա-
 յին կառավարության մի շարք միջոցա-
 ռումների շնորհիվ յերիտասարդության
 զբությունն արտադրության մեջ դարձալ
 ավելի կայուն: Այս բոլորը նպաստում եր
 կոմյերիտմիության աճմանը և բանվորա-
 կան ու գյուղացիական յերիտասարդության
 լայն մասսաների վրա ունեցած նրա ազգե-
 ցության ամրապնդմանը: Կոմյերիտական
 կազմակերպությունները համագումար յե-
 կան իդեալիս բոլեվիկյան կուսակցության
 շուրջը համախմբված: Հակահեղափոխական
 արոցկիզմի գեմ մղած պայքարում նրանք
 լուրջ քաղաքական կովկածություն ստա-
 ցան:

Համագումարը քննարկեց հետեյալ հար-
 ցերը. Քաղաքական դրությունը և յերիտա-
 սարդության խնդիրները, յերիտասարդու-
 թյան քաղաքական դաստիարակությունն
 ու լենինիզմը, յերիտասարդության կոմու-

նիստական ինտերնացիոնալի գործադիր կումբինի՝ ՌԿՅԵՄ պատվիրակության հաշվետվությունը, Կենտրոնական Կոմիտեյի հաշվետվությունը, յերիտասարդության աշխատանքի հեռանկարների մասին, յերիտասարդության գյուղում տարվելիք աշխատանքի մասին, գյուղացիական յերիտասարդության գպրոցների մասին, մանկական կոմունիստական շարժման մասին, Կարմիր բանակում և նախատորմում տարշելիք աշխատանքի մասին:

Յենելով կոմյերիտականների գաղափառական գինվածության մասին կուսակցության 13-րդ համագումարի ցուցմունքներից, 6-րդ համագումարն իր վորոշումներում արձանագրեց, վոր միության վողջ աշխատանքները վորոշող հիմնական խնդիրն են կուսակցության և նրա բոլղեկելյան հինգվարդիայի ղեկավարությամբ՝ միության անդամների գաստիարակությունը՝ անհաջապարի վորոշելով ամեն տեսակի մանրաբուր-

